

եան, Յովհաննէս Արեւելեան, Յովհաննէս Զարիֆեան, Վահրամ Փափաղեան: Ուրիշ անուններ էլ կարելի է տալ: Մեր բոլոր դերասանները կենդանի պահեցին չէյքսփիրեան շունչը հայ թատրոնում, դուրս եկան ազգային սահմաններից, հասան մինչեւ Եգիպտոս, Փրանսա, Իրան, Ամերիկայի Միացեալ Նահանգները, Անգլիա, ամէն տեղից վերադարձան՝ յաղթական դափներն շահած:

Ազամեանի օրով ու նրանից յետոյ, դեռեւս երեք տասնամեակ, չէյքսփիրեան ներկայացումը մեղանում նշանակել է հուժկու տաղանդի տէր, բայց մի դէմք, մի դերասան: Յետադարձում, արդէն սովետական թատրոնում, չէյքսփիրեան բեմական աւանդը նուաճում է բոլորովին նոր մակարդակ:

Անցեալի աւանդներից չհրաժարուելու՝ սովետահայ բեմը, ինչպէս սովետական թատրոնն ընդհանրապէս, նորարարական ճանապարհի վրայ է կանգնում, հին թատերադերերին և առաջին հերթին Շէյքսփիրին կարգալով բոլորովին նորովի:

Ընդլայնուում է չէյքսփիրեան ստեղծագործութեան ըմբռնումը: Ոչ այնքան հոգեբանական - պատմական, որքան, չանտեսելով հոգեբանականը, ընկերա-պատմական մեկնաբանութիւն, որի գլխաւոր առանցքը շարունակում է մնալ բարձր մարդկայնութիւնը:

Մեր թատրոնը ընդգծում եւ շեշտում է Շէյքսփիրի սէրը դէպի կեանքը, նրա ժողովրդականութիւնը, մարդկային անհատի ազատագրման դադափարի կրքոտ պաշտպանութիւնը, նրա հերոսների բախումը շրջապատի հետ, նրանց ձգտումը փոխելու աշխարհի կարգն ու կանոնը:

Ոչ թէ մի կերպարի փայլուն, թեկուզ հանճարեղ մարմնաւորում, այլ՝ ողբերգութեան կամ կատակերգութեան ընդհանուր մակարդակի նուաճում, ներկայացման բոլոր մասնակիցների նպատակաշարժար համախմբում թատերախաղի մրտաշրջման եւ նպատակաւոր բացառաշարժման շուրջը: Դրա լաւագոյն օրինակը կարող է համարուել Վարդան Աճեմ-

եանի բեմադրած «Տասներկուերորդ դիւշերը» Լենինականի թատրոնում: Դերասանների խաղը, նկարչի աշխատանքը, խաղալարի հնարադէտ միտքը միաւորուել է դեղարուեստական ձոյլ ամբողջի մէջ, ստեղծելով կեանքի սէրը զօրացնող ներկայացում, վառ երեւակայութեամբ ձոխացած, նուրբ ճաշակով աղնուացած, Փլամանդական իմաստով հիւթեղ, դասական առումով՝ պարզ ու կառուցիկ: Դա մի ներկայացում էր, որ կարող էր պատիւ բերել աշխարհի բոլոր բեմերին:

Սովետահայ բեմում ողբերգական կերպարների բարձրակէտը եղաւ Փափաղեանի Օթելլոն, որի փայլատակող շողքը կըտրեց հայրենի իրականութեան սահմանները:

Փափաղեանն իր խաղը կառուցեց սպիտակամորթների շրջանում մավրի ապրած ողբերգութեան վրայ: Եւ դրանով՝ նա մի կողմից կարծես ակնարկում էր հայերի ողբերգական կացութիւնը Թուրքիայում, միւս կողմից՝ մարդկանց ուշադրութիւնը հրաւիրում այն աղէտալի հետեւանքների վրայ, որ արդի կեանքում, լինի դա Գերմանիայում, թէ Ամերիկայում, առաջ է բերում ազգութիւնների բաժանումը «բարձր» եւ «ստոր» ցեղերի: Այդպիսով վենետիկեան մավրի հեռաւոր դարերից եկող տխուր պատմութիւնը արդիական շէշտ ու նշանակութիւն է ստանում:

Փափաղեանի Օթելլոյի պատմութիւնը կէս դարից աւելի է: Տիրապետելով մի քանի լեզուի, բացի հայերէնից՝ ռուսերէնի, ֆրանսերէնի, իտալերէնի եւ թուրքերէնի, աշխարհի ո'ր ծայրում չի եղել նա և ո'րտեղ միայն չի խաղացել Օթելլոյ: 1908ից այս կողմ նա 3000ից աւելի անգամ ներկայացրել է Օթելլոյին բեմից: Աննա-Խընթաց դէպք թատրոնի պատմութեան մէջ:

Օթելլոն, ինչպէս նաեւ Համլէթի եւ Մակպէթի դերակատարումները Փափաղեանին համաշխարհային ողբերգակի համբաւ բերին:

Ուրիշ անուրանալի արժէք ներկայացնող Օթելլոն էլ ենք ունեցել. Յովհան-

նէս Արեւելեան, Հրաչեայ Ներսիսեան, որոնք այլ մեկնաբանութիւն տուին իրենց խաղին, շեշտելով բարձր մարդկայնութիւնը ու նրա ողբերգական կործանումը անմարդկային հասարակութեան մէջ: Համլէթներն էլ են տարբեր եղել. 20ական թուականների երազուն ու թախծալի Ներսիսեան-Համլէթին, 40ական թուականների փոխարինեց կասկածներից ու տատանումներից ձերբազատուած, մարտնչող Վաղարշեան-Համլէթը:

Զաւեշտական կերպարների շարքից, իբրեւ ճշմարիտ գլուխ-գործոց, անուն հանեցին Հրաչեայ Ներսիսեանի Փալստաֆը, Լեւոն Զոհրապեանի Թորի Բելլը: Եթէ ո'չ Փափաղեանի, ո'չ էլ Ներսիսեանի Լիրը չհասաւ մէկի Օթելլոյին, միւսի Փալստաֆին, ապա Արեւելեանի Լիրը պակաս չէր նրա Օթելլոյից:

Սովետահայ թատրոնի չէյքսփիրեանա-յի մէջ իրենց բաժինն ունեն նաեւ Արմէն Սիմոնեանը եւ Միքայէլ Մանուէլեանը, Սիմոնեանը եւ Գոռգէն Զանիրեկեանը, Աւետ Աւետիսեանը եւ Դաւիթ Մանուէլեանը, Յովակ Ամերիկեանը եւ Համբար-ձում Խաչանեանը, Արուս Ոսկանեանը եւ Ռուզան Վարդանեանը եւ շատ ուրիշ դերասաններ եւ դերասանուհիներ, որոնց միայն թուարկումն իրենց խաղացած դերերի հետ միասին մի քանի էջ կը զբաղեցնէր: Սրանց կողքին են խաղալարենից Արշակ Բուրջալեանը, Լեւոն Քալանթարը, Արմին Գուլաիկեանը, նկարչին Մելիքսեթ Սիմոնեանը, Արա Սարգիսեանը, երգահաններից Ալեքսանդր Սպենդիարեանը եւ Արամ Խաչատրեանը:

Գրեթէ չկայ տարի, որ մի նոր խաղ չբեմադրուի: Շէյքսփիրեան ամէն մի նոր բեմադրութիւն իր վրայ է բեւեռում դեղբեմադրական ողջ հասարակայնութեան արուեստական ողջ ուշադրութիւնը, առաջ բերում իր շուրջը աղմկալի վէճ ու զրոյց: Որպէս դրա շուրջ օրինակ կարելի է յիշել «Համլէթի» բեմադրութիւնը 1942ին. Վաղարշ Վաղարշեանի Համլէթի լուսաբանութիւնը իրարամբեթ կարծիքների, սուր բախման տեղիք տուեց, պատճառ դառնալով

այդ հարցի շուրջը մի ամբողջ դրականութեան ստեղծման:

Շէյքսփիրի կեանքի ու ստեղծագործութեան մասին մեկնաբանական ուսումնասիրութիւններ են գրել Յարութիւն Սուրխաթեանը, Սիմէոն Յակոբեանը, Յովհաննէս Մամիկոնեանը: Վերջին տարիներս թատերադէտներ Մելքիսեթեանը, Թէյլիբաշեանը, Սամուէլեանը եւ ուրիշները հետազոտել են չէյքսփիրեան աւանդը հայ թատրոնում:

Շէյքսփիրի «Հայկական կենսագրութիւնը» դեռ գրուած չէ: Երեւի մի օր կ'ամփոփուեն հայկական չէյքսփիրեանային տուեալները: Բայց ըստ նախնական տուեալների՝ շուրջ յիսուն թարգմանիչ փորձ են արել թարգմանելու Շէյքսփիրին: Նրա ողբերգութիւններից ու կատակերգութիւններից թարգմանուել է 21 գործ: Հայ բեմում չէյքսփիրեան թատերախաղերից մինչեւ հիմա խաղացուել են տասնեւչորսը: Ամէնից շատ բեմադրուել է «Օթելլոն», երկրորդ տեղը զբաղում է «Վենետիկի վաճառականը» յետոյ՝ «Համլէթը»: Հայ Օթելլոնների թիւը 30ից անցնում է: Համլէթները հասնում են 30ի:

* * *

Շէյքսփիրը մեղանում ամենաժողովրդականացած հեղինակներից է: Մի օրինակ միայն. 1944ին Երեւանում հրաւիրուեց չէյքսփիրեան համամիութենական բանախօսութիւն եւ դրան նուիրուած՝ Հայաստանի թատրոնների չէյքսփիրեան բեմադրութիւնների հանդէս: Հայրենական պատերազմի տարիներին էր այդ, երբ սահմանամերձ քաղաք մուտք գործելու համար պէտք է անցաթուղթ ներկայացուէր. բանախօսութեան ու հանդէսի մասնակիցները տալիս էին Շէյքսփիրի անունը, եւ դա բաւական էր, որպէսզի խտադոյն ստուգողն իսկ այլեւս անցաթուղթ չպահանջէր: Շէյքսփիրի անունն անցաթուղթ էր: Սա դէպք է, իհարկէ, բայց նշանակալի եւ իմաստալի:

Ամէն մի հայ, ճիշտ այնպէս, ինչպէս սովետական իւրաքանչիւր քաղաքացի,

յարգանքով է լեցուած դէպի Անգլիան, որի ծնունդն է վիթխարի Շէյքսպիրը: Սակայն մեր էութեանը Շէյքսպիրն այնքան է հարազատացել, որ նրան համարում ենք նաեւ մերը: Եւ ճիշտ է, անշուշտ, այն միտքը, թէ Սովետական Միութեան մէջ Շէյքսպիրը դառաւ իր երկրորդ հայրենիքը:

Երկար տարիներ մեզ բաժանում են

Շէյքսպիրից, բայց դա ի՞նչ նշանակութիւն ունի, քանի որ նա մեր կեանքի մէջ է եւ մեզ հետ, իբրեւ այսօրուայ հոգեւոր մշակոյթի մի ջահ, որի արուեստը յուզել ու յուզում է ժամանակակից մարդկանց մտքերը եւ հոգեկան բարձր հրճուանքներ բերում նրանց:

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԵԱՆ
(Արուեստագետ)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՇԵՅԻ

ԺԼ. դարու երկրորդ կէսին երեւցած դէմք մըն է Յովհաննէս Մշեցի, որու մասին մեր ծանօթութիւնը շատ սահմանափակ է: Զանազան անգամներ գրուած է իր մասին, ու ամէն անգամ որ առիթ ըլլայ խօսելու կամ գրելու ԺԼ. դարու թոնգրակեցիներու աղանդին մասին, իբր առաջնորդ կը յիշատակուի Յովհաննէսի անունը:

Առաջին անգամ Հ. Բ. Սարգիսեանն է որ մանրամասն կերպով քննութեան կ'ենթարկէ Յովհաննէսի անձը, ճշտելու համար ԺԼ. դարու գրուած «Բանալի ճըշմարտութեան» մոլորութիւններով լի գիրքին հեղինակը¹: Հ. Բարսեղ Սարգիսեան իր ուսումնասիրութեան իբր գըլխաւոր աղբիւր ունեցած է Հ. Պօղոս Մէհէրեանի ինքնակենսագրութիւնը, ուր բաւական մանրամասն կերպով կը նկարագրուի Յովհաննէսի դէմքն ու գործունէութիւնը: Սարգիսեան մեր առջեւ յետադիմ գիծերով ներկայացնելու համար ԺԼ. դարու վիճակն ու հոգեբանութիւնը,

վերոյիշեալ կենսագրութեան կը քաղէ երկու գրուածքներ. նախ կը յիշէ Բօռճիմասուրի վանքի մէջ ապրող Յովհաննէս անունով մէկը, որ եպիսկոպոս ձեւանալով ձեռնադրած է տասնեւչորս քահանաներ, եւ երկրորդ՝ ուրիշ Յովհաննէս մը, որ նախ անցած է Վենետիկ, ուսելից «քիչ օրէն իբր դիւամուր եւ մոլորամիտ» վերջնապէս զերիստոնէութիւնը, ապա կրկին ընդունած. ձեռնադրուած է քահանայ եւ հուսկ կրկին ուրացած: Սարգիսեան հարց կը դնէ «ստուգիւ Բանալի ճշմարտութեան գրութեան հեղինակը այս քահանայ Յովհաննէսն եղած է... թէ նախալիշեալ սուտանուն եպիսկոպոսն է»²:

Հ. Բ. Սարգիսեանէ ետք՝ Վ. Գրիգորեանն է որ շօշափած է հարցը, ու նորանոր աղբիւրներով աւելի ընդարձակ տե-

1. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ., Ուսումնասիրութիւն Մանիքեան-Պաղիկեան քոնդրակեցիներու աղանդին, Վենետիկ, 1893, էջ 90-104:

2. ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ., անդ, էջ 104:

ղեկութիւններ կու տայ մեզի. սակայն մեզի կը թուի որ յարգելի յօդուածագիրը՝ Հ. Բ. Սարգիսեանի գրութեան ակնարկած ատեն, կը նոյնացնէ երկու Յովհաննէսները, առանց յստակ զանազանութիւն դնելու այդ երկուքին միջեւ³:

Երրորդ հեղինակը, որ հարեւանցի ու թեթեւօրէն մօտեցած է հարցին, եղած է Տէր-Մինասեան Ե. Գ.: Այս վերջինս իբր աղբիւր ունեցած է Սարգիսեանի եւ Գրիգորեանի յօդուածները, ու անոնցմէ բանաձեւած է երրորդ մը՝ առանց դնելու հոն անձնականութիւն, այլ մանաւանդ թէ խաթարած է զանոնք՝ տալով զուտ ենթակայական մեկնութիւն մը: Տէր-Մինասեան կը գրէ. «Յովհաննէսը Մուշի շրջանից գնացել է Վենետիկ՝ Միսթարեանների մօտ, իր կրօնական համոզումները երեւի հաստատելու եւ ամրապնդելու համար: Սակայն նա շուտով համոզում է որ կաթոլիկութիւնը շատ աւելի հեռու է իր համոզումներից, քան բնիկ Հայոց աղգային եկեղեցին: Միւս կողմից էլ՝ նրա հիւրընկալների համար պարզուրում է նրա հայեացքների աղանդաւորական լինելը: Դրա հետեւանքով նա իբր մոլորեալ աքսորւում է Վենետիկից եւ գալիս Կոստանդնուպոլիս, որտեղ մեծ նեղութիւններ է պատճառում կաթոլիկ հայերին»⁴:

Մեր ներկայ յօդուածին նպատակը չէ «Բանալի ճշմարտութեան» գիրքին հեղինակը ճշտել, այլ քանի մը լուսաբանութիւններ տալ՝ Յովհաննէս Մշեցիի անձին մասին, որ կը կարծուի հեղինակն ըլլալ յիշուած գիրքին:

Այս նիւթին համար իբր գլխաւոր եւ հասարակաց աղբիւր ծառայած է Հ. Պօղոս Մէհէրեանի ինքնակենսագրութիւնը, զոս Մէհէրեանի ինքնակենսագրութիւնը, որ գրած է «յամի 1811, մինչ էի ամաց 87 եւ դուցէ աւելի եւս»⁵. որով հոն պատմուած դէպքերու նկարագրութիւնը՝ յոնի օրագրութեան մը թարմութիւնը. յիշուած տարի առաջ կատարուած դէպքերու նկարագրութիւնը իր ընդհանուր գիծերու մէջ ճշգրիտ ըլլալով հանգերձ՝ կը պակսին հոն մանրամասնութիւններ: Մենք

այդ մանրամասնութիւնները պիտի քաղենք նոյն Մէհէրեանի նամակներէն, որոնք գրած է օրը օրին Պոլիսէն կամ Կարինէն, տեղեկացնելով կացութիւնը Ս. Ղազար բնակող միաբաններուն, մասնաւորապէս Ստեփանոս Մելգոնեան Արքայ-հօր:

Մէհէրեան ինքնակենսագրութեան մէջ կը յիշատակէ Բօռճիմասուրի վանքի մէջ բնակող Յովհաննէս վարդապետը, որ եպիսկոպոս ձեւանալով ձեռնադրած է տասնեւչորս քահանաներ. սակայն այնուհետեւ Մէհէրեան չի շարունակել պատմութիւնը. չենք գիտեր թէ ի՞նչ վախճան ունեցած է Յովհաննէս. Սարգիսեան պահ մը արդարացիօրէն կը տարակուսի եւ երկիւղով մը կը հաստատէ թէ մի գուցէ այս ըլլայ «Բանալի ճշմարտութեան» մէջ յիշուած Յովհաննէսը, գիրքին հեղինակը: Իրականութեան մէջ, հոս յիշուած Յովհաննէս չեպիսկոպոսը ոչ մէկ յարաբերութիւն ունի «Բանալի ճշմարտութեան» գիրքին հետ, եւ բոլորովին տարբեր անձ է քան Յովհաննէս Մշեցին, ուրացող քահանան: Հոս կ'ուզենք գրեթէ ամբողջութեամբ մէջբերել Մէհէրեանի նամակը, գրուած Կիւմիւշխանէն, 1775 15 Յունիսին. նամակը ուղղուած է Վենետիկ՝ Ստեփանոս Մելգոնեանի. «Ի մըտանէն իմ ի Կարին... վասն վերջին հարկաւորութեան երկու գիւղացի տիրացու ետու ձեռնադրել, միոյն՝ անձամբ իմով ներկայ էի, իսկ զմիւսն յղեցի ի Վաղարշակերտ առ Յովհաննէս եպիսկոպոս, որ բնակի յԱլաշկերտ գաւառին, ի վասն Բօռճիմասուրայ, որ է առ գիւղաքաղաքան իմամուրայ: Սա գիւղաքաղաքութեան իւրոյ ընկալեալ է ի Սիս, ի Գաբրիէլ կաթողիկոսէ, զոր յառաջ քան զերիս ամս անդր ի Սիս սպանին. եւ սո-

3. ԳՐԻԳՈՐԵԱՆ Վ., Բանբեր Մատենադարանի, Թիւ 5, Երեւան, 1960, էջ 333-334:

4. ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆ Ե. Գ., Միջնադարեան աղանդների ծագման եւ զարգացման պատմութիւնը, Երեւան, 1968, էջ 198:

5. ՄԵՀԷՐԵԱՆ Հ. ՊՕԳՈՍ, Ինքնակենսագրութիւն, Դիւան, Ս. Ղազարի, էջ 375: